REPUBLIC OF ARMENIA
KOTAYK REGION MAYAKOVSKI VILLAGE

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
КОТАЙКСКИЙ РЕГИОН СЕЛО МАЯКОВСКИЙ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն , Կոտայքի մարզ, Մայակովսկի համայնք,
գ. Մայակովսկի , 1փ. 8/1 շ. , Հեռ060 28 5013 , 060 28 50 12 ., E-mail mayakovski-1@mail.ru

N 206
25 նոյեմբերի 2014թ.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան

'Տեղական ինքնակառավարման մասին' Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջի համաձայն , Ձեզ է ներկայացվում Մայակովսկի համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 21 -ի նիստի որոշումները :

Առդիր. 6 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

.Կատ. աշխ. քարտուղար
Վ. Փայտյան
094 24 11 34

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք,
գ. Մայակովսկի. Հեռ 0222 6 05 22 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
<<21>> նոյեմբերի 2014թվական N 38-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով ,համայնքի ավագանին ***որոշում է***.

Հաստատել Մայակովսկի համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 12-ի արտահերթ 12-րդ նիստի **օրակարգը**.

1. Մայակովսկի համայնքի ղեկավարի՝ հանրությանը ներկայացվող հաշվետվության քննարկում
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի համայնքային սեփականություն համարվող հողամասը աճուրդ- վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին

Կողմ (6) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱՋԱՏՅԱՆ ԼԵՌՆԻԿ
ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

2014թ. նոյեմբերի 21
Գ. Մայակովսկի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք,
գ. Մայակովսկի. Հեռ 0222 6 05 22 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<21>> նոյեմբերի 2014թվական N 39-Ա

ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ և 9-րդ կետերը՝ ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Ի գիտություն ընդունել համայնքի ղեկավարի հանրությանը ներկայացրած հաշվետվությունը, համաձայն հավելվածի:

Կողմ (6)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ԱՋԱՏՅԱՆ ԼԵՌՆԻԿ		
ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ		
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԷԴԻԿ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

2014թ. նոյեմբերի 21
Գ. Մայակովսկի

Հավելված
Մայակովսկի համայնքի ավագանու
2014թ նոյեմբերի 21-ի N 39-Ա որոշման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Մայակովսկի գյուղական համայնքի ղեկավարի հաշվետու համայնքային ժողովի

2014 թվականի նոյեմբերի 17-ին տեղի ունեցավ Մայակովսկի համայնքի ղեկավարի հանրությանը ներկայացվող հաշվետու ժողովը :

Մասնակցությամբ՝

Համայնքի ավագանու անդամներ.

ԱԶԱՏՅԱՆ ԼԵՌՆԻԿ
ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԷԴԻԿ

Համայնքի ղեկավարի աշխատակազմից՝

1.աշխատակազմի քարտուղար՝ Վ. Փայտյանը,
2. առաջատար մասնագետ՝ Ա. Հարությունյանը,
3. 1-ին կարգի մասնագետ՝ Գ. Ասատրյանը,
4. 2-րդ կարգի մասնագետներ՝ Ա. Ազատյանը, Վ. Մկրտչյանը,

Մասնակցում էին համայնքի 27 բնակիչներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքները հանրությանը իրազեկման մասին:
2. Ընթացիկ կամ այլ հարցեր

ԼՍԵՑԻՆ -Մայակովսկի համայնքի ղեկավար Վահագն Բարսեղյանին

Հաշվետու ժամանակահատվածում ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ , <<Տեղական ինքնակառավարման մասին>>,<<Համայնքային ծառայության մասին>> օրենքներով և այլ իրավական ակտերով , Մայակովսկի համայնքի աշխատակազմը մի շարք աշխատանքներ է կատարել համայնքի սոցիալ տնտեսական զարգացման ուղղությամբ:

Բարելավվել է համայնքի ավագանու գործունեությունը , ավագանու նիստերը գումարվում են ավագանու կանոնակարգին համաձայն :

Համայնքային ծառայության աշխատանքները կատարվում են պատշաճ մակարդակով, բավարար է կազմակերպվում համայնքի քաղաքացիների ընդունելությունը,համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու անդամների կողմից:

Իմ ամենօրյա հսկողության տակ է համայնքի ֆինանսական գործունեությունը: 2014 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ բյուջեն կատարվել է 98 տոկոսով, ֆինանսական

պարտավորություններ համայնքը չունի:

2013թ. մասնակիորեն վերանորոգվել է համայնքի եկեղեցին:

Համայնքի կենտրոնական , փողոցները ապահոված են գիշերային լուսամփոփներով:

Պարբերաբար կատարվում է համայնքի փողոցների աղբահանությունը:

Աշխատանքներ են կատարվում համայնքում գործող առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտների հսկողության ուղղությամբ:

Դասակարգվել և հաշվառվել են համայնքում գործող բոլոր առևտրի և հասարակական սննդի օբյեկտները:

Վարվում են համայնքի զինապարտների գրանցամատյանները:

Գրադարանը տեղավորված է գյուղապետարանի շենքում, առկա է 7640 կտոր գիրք:

2013-2014թթ կառուցվել և շահագործման է հանձնվել գյուղի ամբուլատորիայի շենքը՝ ի շնորհիվ համայնքի ղեկավար Վ. Բարսեղյանի , բարերարներ Գ. Ծառուկյանի և Ա . Խաչատրյանի :

Ըստ հողային հաշվեկշռի համայնքում առկա է 368.65.02 հա գյուղ .նշ.հողատարածք, բազմամյա տնկարքներ՝ 17.55 հա, արոտ՝94.60 հա այլ հողեր՝120.22հա:

Ընթացքի մեջ է համայնքի գլխավոր հատակագծի կատարման աշխատանքները:

Համայնքի աշխատակազմի կողմից ապահովվել է համայնքի բյուջեի, համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերի հրապարակայնությունը:

Բավարար է կազմակերպվում համայնքի քաղաքաշինության աշխատանքները:

Գյուղը գազաֆիկացված է , անելիքներ կան գետի հունի մաքրման, մանկապարտեզի բացման ուղղությամբ , սակայն համայնքը չունի համապատասխան ֆինանսական միջոցներ : Գյուղի շատ փողոցներ չունեն լուսավորություն , փողոցները ,բացի կենտրոնական մասից, ասֆալտապատ չեն:

Ելույթ ունեցան համայնքի բնակիչներ.

1. Ալբերտ Ավագյանը համայնքի ղեկավարի կատարած աշխատանքները գնահատեց դրական և իր դժգոհությունն արտահայտեց ՊՆ-ի կողմից զորավարժանքների վերածված համայնքի բնակչությանը սեփականաշնորհված հողատարածքների զբաղեցնելու հարցի վերաբերյալ :

2. Խաժակ Աթոյանը նշեց, որ համայնքի՛ երկրորդական փողոցները չունեն գիշերային լուսավորություն , իսկ նոր թաղամասերի ճանապարհները գտնվում են վատ վիճակում, հարկավոր է ինչ որ չափով բարելավում անցկացնել :

3. Բաբկեն Մակարյանը նույնպես համայնքի ղեկավարի կատարած աշխատանքները գնահատեց դրական և միաժամանակ իր դժգոհությունն արտահայտեց գետի հունի աղտոտման հարցով:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Համայնքի բնակիչներ՝ Գ. Շահինյանը , Հ. Հովհաննիսյանը , Մ. Ղազարյանը, Ա. Պետրոսյանը առաջարկեցին համայնքի ղեկավարին՝ բարելավել գյուղի աղբահանության աշխատաքները , լուծել ՊՆ-ի կողմից զորավարժանքների վերածված համայնքի բնակչությանը սեփականաշնորհված հողատարածքների , տրանսպորտի և մնացած փողոցների լուսավորության ու ասֆալտապատման հարցը , հնարավորինս սեղմ ժամկետում տանել աշխատանքներ մանկապարտեզի բացման ուղղությամբ , ինչպես նաև մաքրել գյուղի հեղեղատը :

ՈՐՈՇԵՑԻՆ

1.Համայնքի ղեկավարի հաշվետվությունն ընդունել ի գիտություն,

2.Համայնքի ղեկավարին՝

1/ Լուծել համայնքի մանկապարտեզի և գետի մաքրման հարցը:

2/ Լուծել նոր թաղամասերի կոյուղու և փողոցների լուսավորության հարցը:

3/ Համայնքի գլխավոր հատակագծի աշխատանքները հասցնել ավարտին:

4/ Ակտիվացնել հսկողությունը գյուղում իրականացվող ապօրինի շինարարություն կատարողների նկատմամբ:

5/ Լուծել ՊՆ-ի կողմից զորավարժանքների վերածված համայնքի բնակչությանը սեփականաշնորհված հողատարածքները ազատելու հարցը :

2.Ընթացիկ կամ այլ հարցեր

ԼՍԵՑԻՆ

Համայնքի ղեկավար Վ. Բարսեղյանի հաղորդումները համայնքի աշխատակազմի ընթացիկ աշխատանքների մասին. նա նշեց, որ բավարար հիմքերի վրա է գտնվում համայնքի աշխատանքային ներքին կարգապահությունը :

Աշխատակազմի ամենօրյա աշխատանք է համարվում հարկերի հավաքագրումը, քաղաքացիների ընդունելությունների և համայնքի գործավարության կազմակերպումը:

Ամենօրյա ուշադրության կենտրոնում է համայնքի տարածքի սանիտարական մաքրության պահպանման աշխատանքները:

Կբարելավվի համայնքի նոր թաղամասի ճանապարհների և կոյուղու հարցը , ընթացքի մեջ է գտնվում ՊՆ-ի կողմից զորավարժանքների վերածված համայնքի բնակչությանը սեփականաշնորհված հողատարածքները ազատելու հարցը :

ՈՐՈՇԵՑԻՆ

Համայնքի ղեկավարի ներկայացրած հաղորդումները ընդունել ի գիտություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

« 17» նոյեմբերի 2014թ.
գ. Մայակովսկի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 21 » նոյեմբերի 2014 թվական N 40-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության « Հողային օրենսգրքի » 67- րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20- րդ կետի դրույթներով , Մայակովսկի համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան , հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին՝***

1. Համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողամասը՝ աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գինը .

Լոտ N 1 ծածկագիր 07-043-0011-0042 գյուղատնտեսական նշանակության , 0.8630 հա , մեկնարկային գինը՝ 1329 452 դրամ :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (6)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
ԱԶԱՏՅԱՆ ԼԵՌՆԻԿ		
ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ		
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԷԴԻԿ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

2014թ. նոյեմբերի 21
Գ. Մայակովսկի